ուր Թուանքչի լեռան շխթայամառը պատառելով նորա միջով ճանապարհ է բացել Զաքարեայ եպիսկոպոսը: Այս ապացոյցները ես ընդօրինակել եմ կամրջների և Կայլի արձանագրութիւններից, որոնք գրված են հայոց 967—978 թուականներին:

Միեւնոյն թուականին այսինքն 967-ին է պատկանում և Թաղէի վանուց հին նորոգութիւնը և շատ գերեզմանաքարերի թուականը: Ի վերայ այսր ամենայնի, այս աշխարհքն անուանում են Զհարդեբան, որ նշանակում է չորս եկեղեցեաց կառավարութիւն: Թաթարների պատմածի համեմատ այդ եկեղեցիքը եղել են Դիադիանայ սուրբ Յովհաննու վանքը, Գիլխաքենդի վանքը, Զանգի-մերայ Ասպարագնայ վանքը և Թաղէի վանքը.

Այս բոլոր աւերակների մէջ միայն կանգուն է մնացել տասն և վեց-տարեայ մի քրիստոնէական յիշատակարան, Թաղէի վանքը, ուր լինել վարդապետում են Լուսաւորիչ Գրիգորի յղութիւնը: Այս սրբութեան տաճարում այժմ էլ կարողանում է մի հայ հոգևորական կանգնել, հազար երեսուն և վեց նահատակների հոգեհանգստեանը փառաբանելու և դաւաճաններին ողորմեցի առնելու համար: Հակառակ եկեղեցւոյ ներողամտութեան, ժողովուրդը առակալի յիշողութեան տակ է դրել նոցա յիշատակը «Աստուածը», ասումէ ժողովուրդը, չեն կարիճ չէ սատկծել. այդ զզուելի մահացու միջատները դաւաճանների, ազգուրացների գերեզմաններից